



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ բառը կազմուած է ՏԵԱՌՆ, ԸՆԴ եւ ԱՌԱԶ բառերէն, որ կը նշանակէ՝ Տիրոջ առաջ ելլել, Տերը դիմաւորել:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶը թէ՝ Քրիստոնեական եւ թէ՝ հեթանոսական տօն է, որովհետեւ կը խորհրդանշէ Քրիստոսի քառասուն օրուայ տաճար ընծայումը։ Նաեւ իին ժամանակ, հայոց Միհր՝ կրակի աստուածը, որ նախաքրիստոնեական շրջանին



կը պաշտէին, վերստին կը յիշատակուի Տեառնընդառաջի օրը հրավառութեամբ։


Քրիստոնեական հասկացողութեամբ՝ Յիսուսի քառասնօրեայ տաճար ընծայումը կու գայ հրեայ ժողովուրդին իին ուխտի օրենքներէն, որ կը գործադրուեր, երբ ընտանիքին անդրանիկ տղայ զաւակը ծնէր զայն տաճար կը տանէին Աստուծոյ նուիրելու։

Տեառնընդառաջի կրակը իր հետ կը բերէ կլիմայի բարեխառնութիւն եւ հունձքերու առատութիւն։ Այս մեկը բացատրութիւնն է կրակէն ամէն բարիք սպասելու հաւատքին։

Մինչեւ օրս հայկական այս աւանդութիւնը կը պահպանուի։

Փետրուար 13-ին, երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Տեառնընդառաջի յատուկ շարականներ կ'երգեն եւ ատեան դրուած երեք մեծ աշտանակներուն մոմերը կը վառեն։ Ժողովուրդը իրենց մոմերը կը վառեն այդ աշտանակներէն ու անոնցմով իրենց տուները կը լուսաւորեն։

Թիւ Պատրաստե՝ Մարտիր Ազուել-Շահնևի
Նկարչարդե՝ Ռաֆֆի Քեջիւեն



Կրնա՞ս լուծել:

$$\text{spaceship} + \text{spaceship} + \text{spaceship} = 12$$

$$\text{satellite} + \text{spaceship} = 10$$

$$\text{alien} - \text{satellite} = 3$$


$$\text{spaceship} + \text{alien} + \text{satellite} = ?$$

61 : դպրություն


Դուրս կ'անձրեւ եւ մայրիկը
տանիքը լուացք փռած է: Կրնա՞ս
ճիշտ ճամբան ցոյց տալ անոր
տանիք հասնելու եւ լուացքը
արագօրեն հաւաքելու:



Միացո՞ւր պատկերները համապատասխան
շուրջերուն:



Կրնա՞ս օգնել շնիկին հասնելու ուկորներուն:



ՍԵՐ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ

Յի՞ն ժամանակ, բոլոր զգացումները՝ սերը, ուրախութիւնը, տխրութիւնը, գիտակցութիւնը, զգուանքը, բարկութիւնը եւ միւսները... կ'ապրեին հեռու կղզիի մը վրայ:

Սակայն օր մը, անոնց լուր կը հասնի թէ կղզին՝ որուն վրայ կը բնակին, ջուրին տակ պիտի անցնի ու ոչնչանայ: Բոլոր զգացումները սարսափահար փոքրիկ նաւակներ կ'ապահովեն եւ կ'որոշեն փախչի: Միայն սերը՝ կ'որոշէ մնալ եւ մինչեւ վերջին վայրկեան համբերել ու ելք մը խորիիլ:

Երբ այդ սարսափելի օրը կը հասնի, սերը կը տեսնէ որ ճար չկայ, պէտք է հեռանայ՝ կեանքը փրկելու համար ու կը սկսի զգացումներուն դիմել իրեն օգնութեան հասնելու:

Ան նախ կը դիմէ հարստութեան.

- Սիրելի՝ հարստութիւն, զիս կ'ընդունի՞ն նաւակիդ մէջ:

- Ներողամիտ եղի՛ր, կարելի չէ, որովհետեւ ոսկիներս եւ արծաթներս արդէն բաւական մէծ տեղ գրաւած են նաւակիս մէջ,- կը պատասխանէ հարստութիւնը:

Սերը յուսախափ այս անգամ կը դիմէ հպարտութեան, որ շքեղ նաւակով մը կ'անցներ իր մօտեն.

- Սիրելի՝ հպարտութիւն, զիս կ'ընդունի՞ն նաւակիդ մէջ:

- ՉԵ՛, սէ՛րս: Չեմ ընդունիր: Որովհետեւ ինչպէս կը տեսնես, դուս ամբողջովին սկսած ես թջուիլ եւ ես չեմ ուզեր թեզ նաւակիս մէջ առնելով կեանքս վտանգի մատնել:

Այս անգամ կը հանդիպի տխրութեան, որ դարձեալ նաւակ մը ապահոված քովեն կ'անցնի.

- Սիրելի՝ տխրութիւն, զիս կ'ընդունի՞ն նաւակիդ մէջ, ինչպէս որ կը տեսնես, կղզիին մէջ ջուրին մակարդակը կը բարձրանայ եւ կեանքս վտանգի մէջ է:

- Կը ներես, բայց ես այնքա՞ն տխուր եմ, որ կը նախընտրեմ առանձին մնալ:


Ուրախութիւնս ալ նոյնպէս կ'անցնի սիրոյն քովեն ու այնքան ուրախ եր, որ ուշադրութիւն նոյնիսկ չ'ըներ որ սերը իր հետ կը խօսի:

Յանկարծ սերը ծերունիի մը ձայնը կը լսէ, որ զիսք կը կանչէ.

- ՍԵ՛ր, սէ՛ր, եկո՛ւր, մօտեցի՛ր, ելի՛ր նաւակիս մէջ, ես թեզի օգտակար կը դառնամ:

Սերը զարմացած կը բարձրանայ ծերունիին նաւակը: Երբ կ'ուզէ գիտնալ թէ ո՞վ է ան, ծերունին կը պատասխանէ.

- Ես ժամանակն եմ:
Ճիշդ այդ պահուն ան կը հասկեայ, թէ միայն ժամանակն է որ կը հասկեայ սիրոյ արժեքը:



ՄԵՂՈՒՆԵՐ



ԻՆՉՈ՞Ւ ԱՌԱՆՑ ՄԵՂՈՒՆԵՐՈՒՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է ԿԵԱՆՁԸ ՃԱՐՈՒԱԿԵԼ ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻՆ ՎՐԱՅ:

Եթե մեղուները աշխարհին անհետանան, մենք կը կորսնցնենք այն բոյսերը զորս անոնք կը փոշոտեն: Այդ պատճառով ալ կը կորսնցնենք այն կենդանիները, որոնց սնունդը վստահուած է այդ բոյսերուն: Հետեւաբար, սնունդի շղթան փոփոխութեան կ'ենթարկուի եւ կը քայթայուի, որուն հետեւանքով մարդոց այսօրուան մարդկային սնունդը կը նուազի կեսի եւ մօտաւորապես ութ միլիառ կեանքեր կը վտանգուին:



Ի՞ՆՉ ԵՆ ՄԵՂՈՒՆԵՐԸ:

Մեղուները կը ճանչուին որպես աշխատասեր եւ խելացի միջատներ: Անոնք ունին հինգ աչքեր եւ վեց ոտքեր: Ունին նաեւ մոտ 21 հազար տեսակ եւ 520 ցեղ, աշխարհի բոլոր կողմերը տարածուած:

Մեղուները մեղրատու բոյսերուն ծաղիկներէն համեղ մեղր կը պատրաստեն: Անոնք ունին նաեւ յատուկ միջազգային օր, որ կարգ մը երկիրներ կը տօնեն Սայհս 20-ին: